ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 25-ից 27-ը

Հյուսիսային Մակեդոնիա (ք. Սկոպյե) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հասմիկ Մինասյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) Հետբացթողումային հսկողության վարչության (Այսուհետ՝ ՀՀՎ) կամերալ մաքսային ստոգումների բաժնի պետի տեղակալ

Արևիկ Ջանազյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) Հետբացթողումային հսկողության վարչության մաքսային գործարքների հսկողության բաժնի ավագ մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հյուսիսային Մակեդոնիա, ք.Սկոպյե, ապրիլ 25-ից 27-ը

3. Հրավիրող կողմը՝

World Bordert Security Congress (Հյուսիսային Մակեդոնիայի ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային սահմանային անվտանգության կոնգրեսը միջազգային սահմանների պաշտպանության գլխավոր իրադարձությունն է և հանդիսանում է տարեկան հարթակ և հանդիպման վայր հավաքվելու, քննարկելու և կիսվելու համար տեղեկատվության, համագործակցության և համատեղ ցանցի ստեղծման՝ միջազգային սահմանների անվտանգությունը բարձրացնելու համար:

Կոնֆերանսին մասնակցում էին պատվիրարկներ աշխարհի 54 երկրներից

Համագումարը հնարավորություն էր տալիս առերեսվելու առկա խնդիրներին, մարտահրավերներին և լուծումներին, ընդլայնելով ֆիզիկական անձանց

շարժունակությունը, հեշտացնելով համընդհանուր խելացի և անվտանգ սահմանային համակարգերը, ինչպես նաև գլոբալ համաճարակներ, որոնք կարևոր նշանակություն ունեն գլոբալ հանրության համար: Մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր նշանակություն ունի սահմանային անվտանգության միջազգային առաջատար փորձի ուսումնասիրության փոխանակումը:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատանքային քննարկումներ՝

- Սահմանին՝ իրական ժամանակի կառավարման և ձեռք բերված տեղեկատվությունը ռազմավարության ծրագրի վերափոխելու մասին:
- Սահմանին կիրառվող նոր տեխնոլոգիաների վերաբերյալ:
- Տարբեր երկրների սահմանային անվտանգության փորձի վերաբերյալ:
- Ազգային համակարգող կենտրոնների միջև խորացված միջազգային համագործակցություն սահմանային անցակետերում հանցավորության դեմ պայքարելու վերաբերյալ:
- Մաքսանենգության, ահաբեկիչների և կազմակերպված հանցավոր խմբերի դեմ պայքարի վերաբերյալ
- Մշակութային արժեքների անօրինական շրջանառության դեմ պայքարի նոր ինովացիոն RITMMS նախագծի վերաբերյալ:
- Նոր մարտահրավերներ առևտրին և մաքսային ոլորտին:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տվյալ միջոցառման շրջանակներում պաշտոնական հանդիպումներ և ելույթներ չէր նախատեսվում :

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Տվյալ միջոցառումների շրջանակը չէր նախատեսում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառման ընթացքում գործում էր նաև ցուցահանդես, որտեղ ներկայացված էր սահմանային կետերում ինչպես նաև օդանավակայանում կիրառվող վերջին սերնդի տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն էին տալիս ավելի արդյունավետ կազմակերպելու սահմանային հսկողությունը, բացահայտելու և նույնականացնելու կեղծ փաստաթղթերը: Առաջարկվում է ՀՀ ՊԵԿ հնարավորության սահմաններում ձեռք բերել ներկայացված սարքավորումներից սահմանային հսկողությունը բարձրացնելու նպատակով ինչպես նաև առաջարկվում է դիմել տվյալ կոնֆերանսի կազմակերպիչներին նշված միջոցառումը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու նպատակով, որը հնարավորություն կնձեռնի Հայաստանի Հանրապետությանը ամրապնդել միջազգային հարաբերությունները ինչպես մաքային գործի, այնպես էլ պետական մի շարք գերատեսչությունների հետ համագործակցության բնագավառում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

03.05.2023թ.